ՀԱՐԹԱԿԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն Գաղտնիության քաղաքականությունը կարգավորում է docx.am հարթակի (այսուհետ՝ «Հարթակ») կողմից օգտատերերի անձնական տվյալների հավաքագրման, մշակման, պահպանման և պաշտպանության կարգը: Հարթակի սեփականատերն է «ԴՈԿԻՔՍ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ «Ընկերություն»):
Օգտագործելով կամ գրանցվելով Հարթակում՝ օգտատերը հաստատում է, որ ծանոթ է սույն Գաղտնիության քաղաքականությանը և համաձայն է դրան:

1. Հավաքագրվող անձնական տվյալները Հարթակը կարող է հավաքագրել և մշակել օգտատիրոջ հետևյալ անձնական տվյալները՝

- անուն, ազգանուն, հայրանուն,
- անձնագրային տվյալներ,
- հաշվառման և ծանուցման հասցեներ,
- հեռախոսահամար,
- էլեկտրոնային փոստի հասցե,
- օգտատիրոջ կողմից կցված անձնագրի սքանավորված տարբերակ և այլ փաստաթղթեր,
- օգտատիրոջ ստորագրության պատկեր (ստորագրության դաշտում ստեղծված),
- տեխնիկական և վիճակագրական տվյալներ (IP հասցե, սարքի տեսակ, օգտագործման հաճախականություն և այլն):

Տվյալները հավաքագրվում են բացառապես օգտատիրոջ կողմից կամ նրա համաձայնությամբ:

2. Անձնական տվյալների մշակման նպատակները Օգտատիրոջ անձնական տվյալները մշակվում են հետևյալ նպատակներով՝

- իրավական փաստաթղթերի ավտոմատ կազմման և ձևավորման,
- օգտատիրոջ նույնականացման,
- փաստաթղթերի ստորագրման և ուղարկման,
- օգտատիրոջ անձնական հաշվի սպասարկման,
- հարթակի գործառնական աշխատանքի ապահովման,
- տեխնիկական խնդիրների բացահայտման և լուծման,
- հարթակի որակի և ֆունկցիոնալության բարելավման,
- վիճակագրական և վերլուծական նպատակներով (անանունացված ձևով):

3. Անձնական տվյալների մշակման իրավական հիմքը Անձնական տվյալների մշակումը իրականացվում է՝

- օգտատիրոջ համաձայնության հիման վրա,
- օգտատիրոջ և Ընկերության միջև իրավահարաբերությունների իրականացման նպատակով,
- «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի և այլ կիրառելի իրավական ակտերի համաձայն:

4. Տվյալների պահպանում և անվտանգություն Օգտատիրոջ անձնական տվյալները պահպանվում են Հարթակի տվյալների բազայում՝ կիրառելով տեխնիկական և կազմակերպչական անվտանգության միջոցներ:

- անձնագրային տվյալները, էլեկտրոնային հասցեն և հեռախոսահամարը պահպանվում են գաղտնագրված ձևով,
- կցված փաստաթղթերը հասանելի են միայն տվյալ օգտատիրոջ անձնական հաշվից,
- տվյալների հասանելիությունը սահմանափակվում է և պաշտպանված է չարտոնված մուտքից:

Օգտատերը ցանկացած պահի կարող է իր անձնական հաշվից հեռացնել այն փաստաթղթերը, որոնք կցված չեն գործող ձևանմուշներին:

5. Տվյալների փոխանցում երրորդ անձանց Օգտատիրոջ անձնական տվյալները չեն փոխանցվում որևէ երրորդ անձի կամ կազմակերպության՝ առանց օգտատիրոջ նախնական և հստակ համաձայնության, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Փաստաթղթերի էլեկտրոնային ուղարկման դեպքում տվյալ փաստաթուղթը և կից ֆայլերը փոխանցվում են միայն օգտատիրոջ կողմից ընտրված հասցեատիրոջը:

6. Օգտատիրոջ իրավունքները Օգտատերն իրավունք ունի՝

- ստանալ տեղեկություն իր տվյալների մշակման մասին,
- փոփոխել կամ թարմացնել իր տվյալները,
- պահանջել իր անձնական տվյալների ջնջում,
- հրաժարվել տվյալների մշակման որոշ տեսակներից՝ օրենքով թույլատրելի սահմաններում:

7. Օգտահաշվի ջնջում և տվյալների ոչնչացում Օգտատիրոջ դիմումի հիման վրա օգտահաշիվը ջնջելու դեպքում Հարթակից միաժամանակ և անդառնալիորեն ջնջվում են՝

- բոլոր ֆայլերը և փաստաթղթերը,
- ստորագրության պատկերը,
- անձնական տվյալները,
- օգտատիրոջ հետ կապված այլ տեղեկատվություն:

8. Տվյալների պահպանման ժամկետը Անձնական տվյալները պահպանվում են այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է տվյալների մշակման նպատակների իրականացման համար կամ մինչև օգտատիրոջ կողմից օգտահաշվի ջնջման պահանջ ներկայացնելը:

9. Փոփոխություններ Գաղտնիության քաղաքականության մեջ Ընկերությունն իրավունք ունի ցանկացած պահի փոփոխել սույն Գաղտնիության քաղաքականությունը՝ հրապարակելով նոր տարբերակը Հարթակում: Փոփոխված տարբերակը ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

10. Կապի տվյալներ Գաղտնիության քաղաքականությանը վերաբերող հարցերի, դիմումների կամ պահանջների դեպքում օգտատերը կարող է կապ հաստատել Հարթակի աջակցման էլեկտրոնային հասցեով: